

րունակուէին : Ռմբակոծումը թէ վարէն եւ թէ բերդէն յամառութեամբ կը տարուէր : Բայց մենք՝ քաղաքի բոլոր գլխաւոր փողոցները թանձր եւ ամուր պատուարներով կտրած՝ կազմեր էինք մեր զիմազրութեան ուժեղ շքեղագիծը եւ կը հետեւէինք ինքնապաշտպանութեան, գէնքի, փամփուշտի ու անձի ինայտգութեան : Կատարուած էին նախորոշուած մեր բոլոր ձեռնարկները եւ աշխատանքները, ի վրէնսո թշնամուն, գրկելու համար զայն զերակը շոյ գիրքերէ : Սմէն գնով եւ կոխը վարելու ամբողջ կարողութեամբ, կը հետեւէինք մեր գիրքերու պահպանման, նորոգման եւ նորանոր միջոցներով աննուաճ դարձնելու : Թըշնամու բոլոր ազմուկներուն կը պատասխանուէր արթուն հսկողութեամբ, ժլատ կրակով, որ առանձնապէս նպատակին կ'ուղղուէր :

Այդ օրերուն, պահուած հաշուի մը համաձայն, կոխը կը սկսէր առաւօտ ժամը ամենաուշը 12-էն (ը. թ.) մինչեւ գիշերուայ 3-ը (ը. թ.) : Օրական 250-300 թնդանօթ կ'արձակուէր : Իսկ ամէն գիշեր սովորական դարձած ազմակալից հրացանաձգութիւնը կը սկսէր 3-4 ժամ տեւողութեամբ, որու նպատակը մինչեւ վերջը հասկնալ չլրցանք :

Այդ օրերուն ստորերկրեայ անցքերով (լաղըմ) ապահովեցինք երկու կարեւոր եւ առաջաւոր գիրքեր, որոնք մեր գծէն դուրս, փողոցով անջատուած էին, որով յարաբերութիւնը անկարելի դարձած էր, քանի որ թշնամին բերդէն կ'իջխէր փողոցի այդ մասերու վրայ :

Առաջինն էր Կափոյեանի անջատ գիրքը, գէմ առ գէմ թուրքերու ուժեղագոյն յենարանին՝ Կափոյեան Արամի տունը : Երեք կողմէն շրջապատուած թուրքերով, իսկ կոնակէն միայն մեր գիրքերն էին, բայց անկէ այ անջատուած փողոցով : Ծնորհիւ ստորերկրեայ այդ անցքին, թէեւ գիրքը հողաբլուրի վերածուեցաւ, բայց միշտ մնաց փուշ մը թշնամու աչքին, եւ մեր ամբողջ այդ շրջանի գիրքերու ծանրութիւնն եւ յարձակումը կրող գիրք մը մնաց :

Նոյն հանգամանքի մէջ կը գտնուէր նաեւ Արբոյի տունը, այն տարբերութեամբ միայն, որ վերջինս երեք օր էր որ անցած էր թշնամու ձեռքը : Եւ չորսի տունէն զարնուած լաղըմով

անցանք Արբոյի տան տակը, ուրկէ կը կոուէր թշնամին : Այդրիւ 15-ի կէս գիշերին քանդուեցաւ հողի վերջին շերտը : Անցքը բացուեցաւ, եւ աղայք գինուած դուրս ելան գիրքի մէջ ու շէքը բռնեցին :

Թուրքերը յանկարծակիի գալով մնացին շուարած, չըմբռնելով թէ ի՞նչպէս մեր զինուորները հոն մտան եւ դրակեցին :

Այդ օրուրնէ սկսած այդ գիրքը դարձաւ այդ գծի վրայ ծանրութեան կեդրոնը, որ ամենափոստանդաւոր պայմաններու մէջ մնաց անխորտակելի : Յաճախ թուրքերը հրասանդով (հաւան թօփի) յատկապէս ձեղքեցին պատերը, փլցուցին առաստաղները, բայց անցքի տուած դիւրութեան եւ ապահովութեան շնորհիւ գիրքը մէկ վայրկեան անգամ չմնաց լքուած :

Այս շէքը մեր ձեռքը անցնելէ վերջ, ծրարագրուեցաւ խոշոր ձեռնարկ մը, այն է՝ նոր լաղըմ մը բանալ մինչեւ Մարութեանի գիրքի տակը 50 արշին երկարութեամբ, հասնել հոն եւ միանալ գէպի Հայկափանք գնացող աղբիւրի լաղըմին : Մրանով կարելի կ'ըլլար Հայկափանքի հրապարակի վրայ դուրս գալ, գիշերով յարձակելու համար թշնամու վրայ, եւ մանաւանդ գիւրութիւն կարելի էր ունենալ սուրհանդակ ճամբելու : Որովհետեւ մինչեւ այդ՝ երեք անգամ փորձ եղաւ լրատու դուրս հանել Այգեհտան, բայց միշտ անյաջող, քանի որ թշնամին ուժեղ շրթայով պրկած կը պահէր քաղաքը :

Այդ մասին խորհրդակցեցանք լաղըմի աշխատանքներուն ծանօթ վարպետ Բնա Միմոն անձի հետ, որ ինքն իսկ յանձն առաւ գործը 10 աշխատաւորներով միատեղ : Աշխատանքը սկսեց 16-ին : Ամբողջ 10 օր անդուլ աշխատեցան : Երկու օրուայ գործ կը մնար նպատակին հասնելու, երբ 25-ի կէս օրին լաղըմ փուլ եկաւ, որովհետեւ թուրքի դուռնէն գործող հրասանդի մեծ գնդակ մը պատահաբար անցքի դրսի երեսին ընկնելով ուժգին պայթեց եւ դետինը իջաւ :

Ահա վերոյիշեալ հինգ օրերուն, ընդհանուր զիմազրական կոուի հետ միաժամանակ կատարուեցան այդ աշխատանքները, որոնցմէ առաջին երկուքը հզօրապէս ստատրեցին ինք-